ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**«ԿԱՄԵՐԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ**
**"НАЦИОНАЛЬНЫЙ ЦЕНТР КАМЕРНОЙ МУЗЫКИ" ГНО**
**"NATIONAL CENTER OF CHAMBER MUSIC" NCSO**

ԿԱՄԵՐԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

---

N 02
«14» 01 2015թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Կամերային երաժշտության ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «**ԿԵԱԿ-15/1-ՇՀԱՊՁԲ-11/1**»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք.Երևան, Ա.Իսահակյան 1, 01 սենյակ հասցեով, մինչև 2015թ. հունվարի 26-ը, ժամը 16-30-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Է.Գրիգորյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն ք.Երևան, Ա.Իսահակյան 1, 01 սենյակ հասցեում, մինչև 2015թ. հունվարի 26-ը, ժամը 16-30-ն:

Գնման առարկա է հանդիսանում <<Կամերային երաժշտության ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ Վառելիքի ձեռքբերումը:

<<Կամերային երաժշտության ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ Վառելիքի մատակարարման (որոնք կազմված են՝ 1 չափաբաժնից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը ներկայացված են կից ներկայացված պայմանագրի նախագծի N 1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Մասնակիցները հայտով ներկայացնում են նաև իրենց կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական նկարագրերը:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և մասնակիցների կողմից ներկայացվող փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<<Կամերային երաժշտության ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ edvardgrigoryan@gmail.com:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք

է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Հարգանքով՝

<<Կամերային երաժշտության ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ի

տնօրեն՝ Ա. Ծատուրյան